


ՏՆՕՐԷՆ-ԽԱՐԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տեղի. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օստր երկիրներ տեղի Գրան 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախք խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղում և
մակ կամ ալ գրութիւն եւ չի տրուիր:

ՀԱՆԴԵՍԻ ՄԸ
ՅԻՇԱՏԱԿԸ

Այսօր, 24 մայիս, — մեր կամ յունական
թուականով, ինչ որ մեծ տարբերութիւն չու-
նի հիմակ՝ ազգային գծադրութեան տեսա-
կէտով, — Սահմանադրութեան 37րդ տարե-
դարձն է, որուն յիշատակը միայն կը մնայ
ցրուած, գաղթած հայերուն: Կենդանութեան
ու ծիծաղի այս ամսին մէջ, ուր հայրենի տու-
նէն վտարանդի գաղթականը աւելի դառ-
նութեամբ կը յիշէ իր երբեմնի կեանքը, իր
սիրած բնութիւնը, կը խորհի անշուշտ հան-
րային կեանքի ալ յիշատակներուն վրայ, երբ
Պոլսոյ մէջ կը մասնակցէր այդ հանդէսին, ա-
ռանց մեծ գիտակցութեան մը, բայց մեծ
հաւատքով մը որ ժողովրդային հանդէսէն իրեն
հոգին է:

Վերջին անգամ, 1895ին տօնուեցաւ
Ազգ. Սահմանադրութիւնը Հիւանդանոցի դաշ-
տավայրին մէջ, Իզմիրեան Ս. Պատրիարքին
օրով, ոգեւորութեամբ մը որուն նմանը քիչ
անգամ տեսնուած էր. տասն հազարը կ'անց-
նէր բազմութեան թիւը. ամեն կողմէ վա-
զած եկած էին. երգ, բանաստեղծութիւն, բա-
ժակաճառ, իրարու կը յաջորդէին անզուսպ
եռանդով մը և յուսալից: Սահմանադրու-
թեան տարեդարձի առիթով՝ եղբայրակցու-
թեան տօն մըն էր որ կը տօնուէր այն կի-
րակին, և Պոլսոյ հայութիւնը կուտար համե-
րալիս զգացումներու գեղեցիկ օրինակ մը:
Գաւառները, կարգաւոր այդ հանդէսին նը-
կարագրութիւնը, իրենք ալ հեռուէն՝ մաս-
նակից կըլլային սրտով:

Այսօր, երկու տարի ետք, ճիշդ այդ
թուականին, սրտամոլութեան ու անստուգու-
թեան օրերու մէջ, երբ աւելի կենսական հար-
ցերու կը հետաքրքրուինք ամեն մէկս և թախ-
ծալից յիշատակներու առջեւ տեղի կուտան՝
համեմատաբար բարեբաւարիկ օրերու յիշա-
տակները, Սահմանադրութեան հանդէսի վրայ
մտածող քանի՞ հայ պիտի գտնուի: Մենք
ալ. դաւինեզարդ կամարներու պատկերը
կամ խանդավառ երգերու արձագանքը չէ
որ կենդանացունել կ'ուզենք այս տողերով,
երբ մանաւանդ՝ վերաքննութեան քօղին տակ՝
գրեթէ գաղթած կը մնայ Սահմանադրութիւ-
նը. այլ կենդանացունել միայն եղբայրակ-
ցութեան ու սիրոյ գաղափարը որ երսունը

վեց տարիէ ի վեր, ամեն մայիս 24ին, կ'ար-
թըննար հայերու մօքին մէջ. երբ վառվառ
երիտասարդութիւն մը կ'երթար այդ տարե-
դարձը տօնելու, անոնք որ տեղերնուն չէին
շարժեր՝ նորէն պզտիկ հրճուանք մը կը զգա-
յին, սակաւաթիւ սկեպտիկներ կամ անտար-
բերներ միայն մնալով: Եղաւ ժամանակ որ
ամենքը միաբանեցան, գոնէ մտովի:

Այդ միաբանութեան եղական երեւոյ-
թին առիթ տուող զգացումն է ահա որ կը
փնտռենք այսօրուան յիշատակին մէջ: Վոս-
փորի ափերէն մինչեւ Կուրի ափերը, եգիպ-
տական ոստանէն մինչեւ եւրոպական ոստան-
ները, ու նոր աշխարհին մէջ, ամենուրեք կը
գտնուի հայրենակից մը որ անգամ մը գոնէ
մասնակցած ըլլայ Սահմանադրութեան տօն-
ման. փոխանակ լքումի՝ թող ոգեւորուի այդ
յիշատակով. ազգութեան զգացումը տօնելու
ոգեւորութեան մէջ չէ միայն որ երեւան կու-
գայ. լռիկ խոհերու մէջ և լուրջ մտածում
ներու առջեւ աւելի կենդանի կերպով ու
աւելի գուրգուրանքով կը պահպանուի:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Օրուան խնդիրը, Գահիրէի ազգային
շրջանակներուն մէջ, վարժարանի պաշտօնե-
ութեան վերակազմութիւնն է, որ երբ մէկ
կողմէն կրթական գործին նկատմամբ հոգա-
ծութեան մը նշան համարուեցաւ, միւս կող-
մէն գրկանկեղում եւ զանգուսկեղում տեղի
տուաւ: Դպրոցը բարեկարգել կոչուի, կըն-
քընդեն. եւ բարեկարգութեան առաջին
փայլը կ'առնուի մրցման ֆենոթիպի կասա-
րելով ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն
ընտրութեան համար. այս ալ, գոնէ տեսա-
կանին մէջ, շա՛ւ: Բայց այն վարկեանէն
որ՝ նոր ներկայացող ընտրելիներուն նման
ֆենոթիպեան եկթարկել կ'ուզեն ուսուցիչներ
որոնք տարիներէ ի վեր կը պաշտօնավարէին
վարժարանին մէջ, առանց երբեք դժգոհու-
թեան մը առիթ տուած ըլլալու, խնդիրը կը
կենտրոնի. իսկ երբ այդ ուսուցիչներէն ոմանք
քոչորովին պաշտօնագրով կ'ըլլան, այս կամ
այն պատճառով, ու ոմանք ալ անապո-
շակի գեղջում եւ անսխմանի անկում կ'ու-
նենան, հոն՝ անխրատութիւնը կը սկսի:

Նորակազմ հոգաբարձութեան այս ըն-
թացքը թէ՛ սկզբունքի տեսակէտով եւ թէ՛

անհասկանալի իրաւունքի տեսակէտով, ֆենա-
դասելի է: Գաղտնի վարժարանի գեղա-
գրութեան եւ ճայնագրութեան դաստնուն որ
միակցաբար կ'առաջարկէր պաշտօն կը վա-
րկեցնէր ստիճանէ, և՛ ֆենոթիպէն և՛
անկումէն միջադէպի մը հետեւանալով. վար-
ժարանի մը որ յատկապէս Պոլսէն իրաւունքով
կը դաստնունէր մէկ տարիէ ի վեր, երկրոր-
դական նկատմամբ է՝ անհասկանալի գեղջում,
եւ իր վրայ առաջնութիւն տրուած է նորեկ
օրիորդի մը որուն հետքերուն գերազան-
ցութիւնը տարակուսելի է, կ'ըսուի. դարձ-
եալ՝ վարժարանի հայկաբանութեան ու-
սուցչին անհասկանալի կեանքի իյուցում
է: Կայ նաեւ երաժիշտ դաստնունի կամ դրա-
մայիսի խնդիրը, որ առկա կը մնայ:

Խումբ մը պարկեշտ ու աշխատասէր դա-
ստնուններու եղած այս գրկանկեղ խորին վիշտ
կը պատճառէ մեզի, եւ կը կարծենք քաղ-
ման ըրրալ Գահիրէի ազգային զգացումնե-
րուն, պահանջելով որ ո՛ր եւ է կերպով գո-
հացում տրուի անոնց: Վարժարանը բարա-
կանայտի եկամտներ ունի, նոր դասա-
ստներ կ'արեւալ առեցումներու համար՝ ա-
ռանց հիմնադրու. դպեցում:

ԱԹԵՆԱԿԱՆ ՆՈԹԵՐ

Բ.

ԱՐԻՍՏԱՐԱՆ ԸՆՏԱՆԻՐԸ

Երկրիս թագաւորը վարդէ անկողնի մը
վրայ չէ այս միջոցիս: Թերթերը գրեցին թէ
ամէն օր սպառնական նամակներ կը տեղան
գլխին և գրեթէ բանտարկուած կը մնայ պա-
լատին մէջ՝ որ արդէն աւելի բանտի մը կը
նմանի: Հիմա անշուշտ իր սովորական պտոյտը
չկրնար ընել ձիով, ամեն իրիկուն, Ամբիա
ժառուղիէն մինչեւ Զաբիոն ու Ուրմիան Ա-
րամազդի սիւները: Արդէն ժողովուրդը չէր
սիրեր զինքը և ահա՛ այժմ սկսած է ատել:

Աթենացի մը որուն հետ յաճախ տես-
նուելու առիթ կուենայի, օր մը բացատրեց
թէ ինչու՝ ժողովուրդը հակակիր է թագա-
ւորին:

— Նախ որ օտարական է, ըսաւ. ասկէ
զատ, բուն անունը Կիյոմ է և Յունաց թա-
գաւոր ըլլալուն համար միայն Երկրիս կը

կոչուի : Հաս գալէն ի վեր աւելի վաճառա-
կանութիւն կընէ՝ քան թագաւորութիւն : Ըն-
կեր եղած է քօնիւքի գործարանատէրներու
և չամիլի վաճառականներու հետ : Ազարակ-
ներ ունի որոնց մէջ հաւ կը պահէ և մեծ
քանակութեամբ հաւկիթ կը ծախէ : չէնք շնորհ
յունարէն չկրնար խօսիլ ու սխալ առողջանու-
թիւն մը ունի :

Օչկա թագուհին քիչ մը աւելի ժողովր-
դական է : Նախ որ ի ծնէ Օրթոտորք է և
յետոյ՝ դեղեցիկ է : Գաշտած կապրի իր
աղջկան՝ Ալեքսանդրա իշխանուհիին՝ մահու-
նէն ի վեր :

Երկի կնիկ շատ ընտանեակէր են և իրենց
մեծագոյն հաճոյքն է կիրակի օրերը սղաքը
ժողովել և միասին Բիրէ երթալ, ուր թագա-
ւորը պզտիկ քէօշի մը ունի թէմիատակէսի
գերեզմանին տեղը :

Գահաժառանգը , որ նշանաւոր հանդի-
սացաւ իր անբացատրելի նահանջներովը ,
խոշոր ու կորովի երիտասարդ մըն է և կոս-
դանթէն կոչուելու բախտը ունի , ինչ որ իրեն
քիչ մը ժողովրդականութիւն կուտայ , կամ
մանաւանդ կուտար , որովհետեւ այդ մագական
անունն իսկ , կարծեմ , մեծ ազդեցութիւն
մը չսխալի ընէ ասկէ ետքը :

Արքայական ընտանիքին ամենէն սիրուած
անդամն է թագաւորին երկրորդ որդին՝ Եոր-
կիտ իշխանը , որ նաւային սպայ է և վերջին
դէպքերուն ատեն թորփիլանաւներու հրամա-
նատար անուանուեցաւ : Զինքը “ըմբիշ իշխան”
կը կոչեն այն քաջագործութեանը համար որով
ձաքանի մէջ փրկեց Զարիվիչին կեանքը , — այ-
ժըմ՝ Նիքոլա կայսր — գաւազանի հարուստ
մը իջեցնելով ճաքոնցի մոլեռանդի մը գլխին՝
որ կուզէր սպաննել Ռուսիոյ գահաժառանգը :

Պզտիկ anecdote մը պատմեմ Եորկիտ իշ-
խանին վրայ , որ կրնայ չահեկան ըլլալ հայ
ընթերցողներու համար :

Սասունի ջարդէն ետքը , հայկական խն-
դրի ամենէն հրատապ միջոցին , կը յիշուի
անշուշտ որ հայոց իշխանութիւն մը հաստա-
տելու խօսքեր եղան , մանաւանդ անգլիական
թերթերու մէջ և նոյն իսկ ընտրելիներ մէջ-
տեղ դրուեցան : Ամենէն աւելի թէքի դքսին
ու Եորկիտ իշխանին անունները կը շրջէին՝
իրեն յարմարագոյն ընտրելիներ : Ծիշդ այդ-
միջոցին , Եորկիտ իշխանին թիկնապահներէն
մին կուգայ Աթէնք գտնուող հայ գաղթա-
կաններու մօտ և իշխանին կողմէ կը խնդրէ
որ եւրոպական լեզուով մը գրուած Հայոց
պատմութիւն և Հայաստանի աշխարհագրու-
թիւն մը հայթայթեն իրեն անմիջապէս : Իշ-
խանը կը փափաքէր ուսումնասիրել այն երկրի
պատմութիւնը և դիրքը՝ ուր կը յուսար թէ
զինքը պիտի հրաւիրէր եւրոպական համաձայ-
նութիւնը , կառավարելու համար : Հայերը
կը պատասխանեն թէ պէտք եղած դիրքերը
չունին և խրատ կուտան թիկնապահին որ
Վենետիկի միսթարեաններուն դիմէ : Խեղճ
Եորկիտ իշխանը անկէ ետքը տեսաւ թէ այդ
համարաւոր համաձայնութիւնը , փոխանակ
իշխանութեան , ինչ փորձանքներ բերաւ ո՛չ
միայն մեր , այլ և իրենց գլխին :

Մուշկայ ըսելու որ թագաւորը՝ հակառակ
իր առեւտրական գործունէութեան՝ շատ փա-
րա չունի : Գրեթէ միշտ պարտք ունի իր դեր-

ձակին ու կօշկակարին , ճիշդ հայ խմբագրի
մը պէս : Արքունեաց ատամնաբոյժը հայազգի
մըն է , սօգթօր Աղաբէկ , որ տարիներով
արքայական ու իշխանական բերաններու ակ-
ուայները լեցնելէ ետքը , երբ առնելիք տրախ-
միններուն երկայնութիւնը հարկւրաւոր կան-
գուններու կը հասնի , իր իրաւունքը կը պա-
հանէ : Թագաւորը պալատական մը զրկելով
իր ատամնաբոյժին՝ կ'առաջարկէ առնելիքին
փոխարէն Ս. Փրկի պատուանշան մը տալ :
Հայազգի բժիշկը , որ իբրեւ թուրքացի շատ
լաւ դիտէր պատուանշանի մը արժէքը , կը
նախընտրէ Ս. Մամնան : Եորկիտ թագաւորը
կը ստիպուի վճարել , բայց ա՛յ անկէ ետքը
ակոյս քաշելու կամ լեցնելու համար սօգ-
Աղաբէկ պալատ չկանչուիր :

Եորկիտ թագաւորը շատ պարզ մարդ-
մըն է և միայն ստիպողական պարագաներու
մէջ թագաւորի դերը կը խաղայ : Ուրիշ ատեն
քաղքեցիի պէս հագուած , ձեռքը գաւազան
մը ու բերանը սիկառէթ մը , ժուռ կուգայ
Օտոս Սթատիոնի մայթերուն վրայ կամ Սին-
տաղմայի հրապարակը : Երբեմն կը պատահի
որ իր սիկառէթը վառելու համար անցորդի մը
կը դիմէ : Կան քաղիքախաներ որոնք կը
մերժեն իրենց թագաւորին այդ պղտիկ ծա-
ռայութիւնը մատուցանելու և կոնակին կը
դարձնեն , երբ կը տեսնեն որ դէպի իրենց
կուգայ :

Եորկիտ թագաւորը , որ իր հարստակ-
ները երեսուն տարիէ ի վեր կը ճանչնայ ,
չառնուիր ասանկ բաներէ :
ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

Ք Ր Օ Ն Ի Կ

Եգիպտոս . . . բայց «այդ երկրը պզտիկ դը-
ժուբ մ'է» կըսէին մեզի , ո՛չ թէ մեղաւորներու
ահագին բողբոջութիւն մը պարունակելուն համար , այլ
հօգաւ , սատակ և անտանելի ջերմութեանը տեսա-
կէտով :

Երկրի վրայ շատ յոռետես գաղափար ունե-
նալու է մարդ՝ կարծելու համար թէ իրա՛ւ դժոխքը
բազմիքի ձեռով չինուած տեղ մ'է ուր մեզի պէս
ներք քրտնելով կը քաւեն իրենց հոգւոյն ազտո-
տութիւնները :

Եւ ո՛վ է վերագործեր անկէ որ ձեզի ըսէր
թէ դժոխքին մէջի տարութիւնը Ռէօմիլի 80 աւ-
տիճանին կը հասնի և թէ հոն մարդիկ ալքախայէ
քաւ-բուսիւններ և կիները թափաքայիկ պաթիթէ
բեկուաբներ հագած են ամեն անգամ որ իրենց
մեղքերուն հաշուելիքը տալու կը ներկայանան երկ-
նորնակ դատաւորներուն առջեւ որոնք ապահովա-
պէս տարին 67,000 ֆրանքի թուղակ մը չունին և
ոչ ալ բառամտեայ արձակուրդ մը : Երկնաբնակ դա-
տաւորները երկրարաններուն վրայ սա առաւելու-
թիւնը ունին միայն որ չնորհիւ այդ սանդարանա-
կան ջերմութեան գոնէ ներքի կ'ըլլայ իրենց օւ-
dienceին ամբողջ երկայնութեամբը . . . քնա-
նալ :

Եւ կը կարծէր թէ չկա՞ն այնպիսի դատաւորներ
որ այս երկրագնդին վրայէն՝ վերիններուն «ախ»ը
կը քաշեն :

Դառնալով Եգիպտոսին , ես պիտի ըսեմ թէ ,
հոս ալ կարելի է ստորիլ ինչպէս կապրէինք Վոս-
փորի գեղածիժաղ ամերուսն՝ վրայ , — պիտի ըսէր
ազգային վարժարանի որ և է չըջնաւարտ մը :

Ո՛վ կըսէ թէ իր մէջ դիւթիշ , հրապարիչ բան
մը չունի Վոսփորի եզերքներուն վրայի մայիսը .
բայց ապրիլը . . . :

Եւ դժբաղդարար աշխարհիս չորս կողմը , ամեն
օրսոյցերու մէջ , սպրիլը մայիսէն առաջ կուգայ :
Վերջապէս Ֆէլահներու այս երկրին մէջ տա-
րութիւնը արտասովոր բան մը չունի իր մէջ : Խամ-

սինին էն շատ փչած օրը նորէն պիտի տեսնաք
մարդիկ որ իրենց գործին պիտի երթան , բայ խա-
նութներ պիտի գտնաւ , Երկի-կընիկ միասին պիտի
ապրին , կառքերը պիտի երթեւեկեն , ջուրը չպիտի
չոգխանայ , պարտապահանջները իրենց իրաւունքը
ուղղէ չպիտի դադրին , տղան պիտի լայ և սիրա-
հարը պիտի հառաչէ :

Ընկերութեան սրճարանը երբէք չպիտի պար-
պուի , թափու պիտի խաղան , պիտի բանրասեն ,
կառուները մէյմէկ տալիւ պիտի կտրին , թրամ-
վէյը մարդ պիտի կոխէ , կառապանները մէյմէկ
Մուսա պէյեր պիտի նկատեն իրենք գիրենք , պար-
տէզը լնցուն պիտի ըլլայ դատարկ մարդերով , Եկե-
ղեցին մարդ չպիտի ըլլայ , սակայն թապախ պիտի
տրջագայեցուցուի , թաղականները բանկայը պիտի
չարուին , և աղքատները պիտի մուրան (տարին 1000
ոսկի եկամուտ ունեցողներն անգամ .) աղք . վար-
չութեան դէմ բողբոջները չպիտի դադրին բողբ-
բել . թատրոնները իրենց ներկայացումները պիտի
չարունակեն , Փարուը պիտի հրատարակուի , և դու-
ցէ . . . Այլապէս ամառուան մէջ ալ հոս գայ :

Ինչպէս կը տեսնէք , Եգիպտոս՝ Եգիպտոս ըւ-
լայէ չպիտի դադրի . քիչ մը պիտի բրտընինք , ա՛խ ,
օ՛Փ պիտի ընենք . բայց հոգ չէ , ձմեռը վրայ պի-
տի հասնի և անցեալը պիտի մոռնանք :

Տարբերութիւնը սա է որ Պոլիս՝ գարնան վե-
րադարձին կ'սպասենք , հոս՝ աշնան : Ահա բաւ մը
որ միտքս շատ բաներ կը բերէ , բայց հոս տեղը չէ ,
մե՛ղք :

Յուսահատելու բոն չկայ , կ'ուզէ՞ք այս երկրին
մէջ հանգիստ ապրիլ , ձեզի նշանաբան ընտրեցէք
սա հետեւեայ երեք բառերը

էշ , մայէշ , պէթէշ

որոնց մէջ կը կայանայ ամբողջ եգիպտացիներուն
կեանքը :

Յ. Ա.

Ա.ԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Պոլսոյ ազգ. թերթերը կը ծանուցանեն
թէ , թէեւ Բարթողիմէոս Եպիսկոպոս և Գէ-
որգ վարդապետ Իւթիւճեան հրաժարեր են
Եգիպտոսի առաջնորդական ընտրելիութենէ ,
սակայն Վարչութիւնը չէ ընդուներ :

Որչափ որ կը յիշենք , Իւթիւճեան Հօր
անունը չիկար ընտրելեաց ցանկին մէջ . գալով
Բարթողիմէոս Եպիսկոպոսին , աւելորդ յոգ-
նութիւն մը ստանձներ է իւր հրաժարումովը :

Երէկ իրիկուան Սուրհանդակով հասած
Կ. Պոլսոյ թերթերը կը ծանուցանեն Հայ Հռո-
մէականաց պատրիարքական փոխանորդ Աս-
լանեան Գերապայծառին մահը :

Կը յիշեցնենք թէ այս գիշեր ժամը 9ին
տեղի պիտի ունենայ Ընթերցասիրաց ընկե-
րութեան սրահին մէջ ընտանեկան երաժըշ-
տական երեկոյթը :

ՄԱՐՄԻՆԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Մարմինայի գերեզմանատան Հոգաբար-
ձութիւնն հետեւեալ շրջաբերականն ուղղած
է այն ննջեցեալի տէրերուն որոնք գերեզմանա-
տան նոր մասին մէջ հող ունին և որոնց հաշիւն
առկախ մնացած է ցարդ :

Սուրբ Մինաս մատրան և գերեզմանատան Հո-
գաբարձութիւնս՝ պատիւ ունի ծանուցանելու Ձեզ
թէ գերեզմանատունն ու պարտէզը զարդարելու
համար՝ պէտք եղած նախապատրաստական ձեռնար-
կութիւններն ըրած է արդէն . բայց որովհետեւ այս
գործը դրամի կը կարօտի , ուստի կաղաչէ Ձեզ որ
բարեհաճէք ըստ ներկայեալ հաշուին որ պատրաս-
տուած է Գուսառ . Պատկ . Ընդհանուր Ժողովոյ

անցեալ ամսոյ 7/19ի նստի մէջ հաստատուած սա-
կայոցին համեմատ՝ գերեզմանատան նոր բաժնին
մէջ թաղուող Զեր ննջեցեալին գերեզմանագինը որ
է . . . զորոշ ողջ վճարել տեղւոյ Առաջնորդարանի
անտուկին , ի փոխարէն ստացականի և ի հաշիւ
Հոգարարձութեան :

Հոգարարձութեան Զեզ գիւրութիւն մ'ընծա-
յելու նպատակու 40 օր պայմանաւ կուտայ
Զեզ սոյն վճարման համար, խնդրելով որ եթէ արգէն
Զեր սահմանած կտորի տարածութիւնն աւելցնելու
կամ պակսեցնելու դիտաւորութիւն ունի՝ միեւնոյն
պայմանաւ մէջ հաճիք Զեր ուզած չափի մասին
համաձայնիլ Հոգարարձութեան տառնագիրը Տ՝
Վառնիպուհ Գալփակեանի հետ, ու արժէքն ստա-
ցականու վճարել Առաջնորդարանի անտուկին ի հաշիւ
Հոգարարձութեան :

Գերեզմանատան զարդարումն ստիպողական ու
կարեւոր ըլլալով՝ Հոգարարձութեան հարկ աւսած
է անյայազ գործողքէլ անվճար գերեզմանագի-
նելու մասին Գաւառ. Պատկ. Ընդհ. Ժողովոյ ամ-
սոյ 9/21ի նստին մէջ տուած որոշումն, որու կրնար
տեղեկանալ Առաջնորդարանի Գիւմնատունէն և
որու տրամադրութիւններէն մէկն է թէ ննջեցեալի
մը բոլորտիքէն սահմանուած ու գինը չվճարուած
գերեզման ետ սխտի առնուի ու գործածուի ի հարկին :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Եգիպտական բանակին սպարապետ
Քիչնէր փաշա երէկ առաւօտ պատիւ ունեցեր
է Բարձր. Խալիլին ներկայանալով՝ Բաւ-էլ-Ինի
պալատին մէջ :

— Լօրտ Քրօմլը որ այս պահուս Ալեք-
սանդրիա կը գտնուի , յուրիս 17ին Անգլիա
պիտի ուղեւորի արձակուրդով :

— Էջ Մռայեան լրագիրը Գահիրէի ոս-
տիկանութեան ուղարկութիւնը հրաւիրած ըլ-
լալով էջ Մռչիլի խմբագիր-անօրէն Պ. Սար-
գիսի վրայ , որպէսզի իր գաղտնի տեսնուելէն
առաջ չըլլայ որ հեռանայ Եգիպտոսէն, Բռ-
կրէ կ'ապահովէ իր արար պաշտօնակիցը՝ Էջ
Մռայեանը թէ անհոգ թող ըլլայ , Պ. Սարգիս
տեղէն շարժած չէ և թէ ինքզինքն ապահով
կըզգայ այստեղ :

— Մարդահամարի գործողութիւնները չու-
րեքշաբթի օր աւարտեցան Եգիպտոսի մէջ :
Աղեքսանդրիայի բնակիչներուն այժմեան թիւն
է 319,761 :

1882ի մարդահամարի արդիւնքն էր 230
հազար հոգի , հետեւաբար 13 տարուան մէջ
90,000 հոգւոյ յաւելում մը տեղի ունեցած
է այդ կարեւոր քաղաքին մէջ :

Գահիրէ 576,400 բնակիչ ունի , Թանթա
57,288 , Ասիութ 42,076 , Չակագիկ 35,475,
Մանսուրա 36,247 , Տամիէթ 31,241 , Փայում
31,233 , Մէհալա-էլ-Քէպիր 31,097 , Ալմիս
27,979 , Բէնէ 27,765 , Սիւէզ 17,457 , Բօռ-
Սայիտ 35,308 :

— Այն ոստիկանը որ անցեալ շաբաթ
Աժանա հալատի տնօրէն Պ. Վէյսիէն քանա-
կոծած էր , պատերազմական ատենի մը առ-
ջեւ պիտի դատուի . իսկ կառապանը՝ պատ-
ժական ատենին առջեւ :

— Գահիրէի պատժական ատեններ երկու
ամսուան բանտարկութեան և դատական ծա-
խուց վճարման դատապարտեց արաբերէն էջ
Պրիս լրագրի տնօրէն-խմբագիրը՝ Էլ Սէյտ Էլ
Պաքրիի դէմ թշնամական յօդուած մը հրա-
տարակած ըլլալուն համար :

* * *

Նէկիլէի (Պէհէրա) մէջ աւազակներ տան մը վրայ
յարձակած և տանտէրը սպաննած են . . . վարժու-
թիւնին չի կորսնցնելու համար և յետոյ անհետա-
ցած են , ինչպէս տմեն աւազակի սովորութիւնն է :

— Նոյնպէս Պէհի-Պէիթի մէջ (Պէհի Սուէֆ)
կին մը սպաննուած է հրացանի մը հարուածով երբ
տանը տանիքին վրայ էրկանը բով պտուկած էր :
Ահա՛ ամուսնոյն քով պտուկելու անսպասեղու-
թիւն մը . . . զանէ Պէիթի մէջ :

— Գահիրէի արտակերտին մէկ թաղին մէջ բժշ-
կութեան նոր մէթոս մը գտնուած է , ահա՛ ինչպէս :
Խեղճ մարդուն մէկը երկար ատենէ ի վեր
լուսնոտութենէ կը տառապէր . բարեկամները և
ղրացիները կը սխալէին թէ ստատնան փորին մէջ
մտած է և այդ է հիւանդութեան պատճառը .

Խեղցիկին մէկը յայտարարեց որ եթէ հիւանդը լաւ
մը ծեծէին , ստատնան կառնէր կը բալէր և հիւան-
դը կ'առողջանար , հետեւաբար զրացի և բարեկամ
ձեռք ձեռքի տալով մարդը փառաւորապէս տրփե-
ցին , այն տա՛ ինչոն որ ժամ մը ետքը հիւանդը
հոգին աւանդեց : Իրաւ է որ եթէ սովորական բժիշկ
մ'ալ կանչէին , արդիւնքը կարելի է տարբեր չըլլար
որովհետեւ ամէն ճամբայ Հոգմ կը տանի :
Եւեմաղարմանութիւնը՝ այնպիսի նոր մէթոս մէ
զոր մինչեւ այժմ բժիշկներն իրարու համար վերա-
պահած են :

— Հինգշաբթի առաւօտ Աղեքսանդրիայէն ժամը
7ին մեկնող կառախութիւն վրայ Տամանհուրի ժող
հրացանի երկու հարուած պարպած է Պէհէվի մը
որ բարեբաղդարար շատ մնաս չէ կրցած հասցնել :

Կառախութիւն պետը Տամանհուր հասնելուն
ոստիկանութեան լուր տուաւ որ անմիջապէս ձեռ-
րակալեց չարագործը :
Ահա պէտէվի մը որ դեռ շատ խակ է . . .
գարթման Աթմանսի արհեստին մէջ :

Զ Ի Ն Ա Դ Ա Դ Ա Ր

ՆԻ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Վերջին հեռագիրներուն նայելով , որոնք
այլ ևս տարակոյտի տեղի չեն թողար , Թուր-
քիոյ և Յունաստանի միջեւ զինադադար
կնքուած է պաշտօնապէս՝ թէ՛ Եգիպտոսի և
թէ՛ Թեսաղիոյ կողմերուն համար , և այս գոր-
ծողութենէն անմիջապէս ետք Կ. Պոլսոյ դես-
պանները գումարում մը ունեցել են՝ հաշ-
տութեան պայմաններուն վրայ բանակցելու
արտաքին գործոց նախարար Թէվֆիկ փաշա-
յի հետ : Երէկ զիշեր հասած Ռիւդէրի հե-
ռագիր մը կը ծանուցանէր թէ ռուսական
դեսպան Պ. Նէլիսով ստանձնել է կարգա-
դրել սահմանագիծի որոշման խնդիրը , Քրան-
սական դեսպան Պ. Բանպօն՝ հիւպատոսական
դաշնագիրներու իրաւասութեանց (գալիլի-
շախիօն) փոփոխման խնդիրը , և անգլիական
դեսպան Սըր Ֆիլիք Քըրրի՝ պատերազմական
տուգանքի քանակութեան խնդիրը : Այս բա-
նակցութիւններ ու խորհրդակցութիւններ
զիւրաւ և արագ կերպով չեն կրնար աւար-
տիլ , ինչպէս յայտարարեց արգէն Պ. Պալֆուր
Անգլիոյ խորհրդարանի յունիս 4ի նիստին մէջ՝
թէ կրէտական խնդրէն շատ աւելի դժուա-
րութիւն կը ներկայացունէ Թուրքիոյ հետ
հաշտութեան կնքման խնդիրը :

Պ. Պալֆուրի կարծիքով , պէտք չէ յո-
ռետուս ըլլալ կրէտէի ապագայի մասին : Սպա-
սելով այս լաւատեսութեան իրականացման ,
Յունաստանի քոյր կողին ապահով ու անգործ
վիճակ մը ներկայացունելէ հեռի է : Արդու-
թիւրի ապստամբութեան յայտարարելու
եւրոպացի ծովակալներուն , թէ մինչեւ որ օսմ.
զօրքերը չհեռացուին կողիէն , իրենք որ և է
բանակցութեան չի պիտի մտնեն , և առժամ
եայ վարչութիւն մը կազմեր են՝ իրենց պետ
ունենալով Միխաիլս :

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ս Ք

Երէկուան Բոսկիւրէի մէջ կը կարգանք
թէ Հայր Շարմիդան , Փրանսացի կրօնաւորը ,
որ առաջիններէն մէկը եղաւ Հայաստանի կո-
տորածներուն վրայ Քրանսական մամուլին ու-
շաղրկութիւնը հրաւիրող , այդ ողբալի դէպ-
քերուն վրայ իր պատրաստած տեղեկագրին
առաջին օրինակը Ս. Պապին ուղարկած ըլլա-
լով , Հռոմայ քահանայապետէն ստացել է
շնորհաւորական ու քաջալերական գիր մը ,
որ կ'օրհնէ զինքը և ամեն անոնք որ օգնու-
թեան կը հասնին տառապեալ հայերուն :

— Մշակէն՝

«Այս օրերս Թիֆլիզ է եկել մի գերմա-
նացի , Ֆիշէր անունով , որին յանձնված է
գերմանական մի նպատամատոյց Յանձնաժողո-
վի կողմից տեղեկութիւններ հաւաքել Թուր-
քիայից փախած և Կովկասում ապաստան
գտած հայ գաղթականների մասին : Բաց ի
զրանից , Ֆիշէրը յանձնարարութիւն ունի ան-
ցնել Ուրմիա և այնտեղ մի ապաստարան
հաստատել Պարսկաստան փախած հայ գաղ-
թականների համար » :

— Ռէժոնի մէջ կը կարգանք .

«Կ. Պոլսէն առնուած լուրերու նայելով ,
դեսպանները նոր գիտողութիւններ ուղղեր են
Բ. Դրան՝ գործադրել տալու Թուրքիի արտա-
սովոր պատարանին վճիռներն այն խաւաններուն
նկատմամբ որոնց մեղսակցութիւնն հաստատա-
ուած է այդ դատաւի կոտորածին մէջ : Դես-
պաններն իրենց ծանուցադրերուն մէջ կը շեշ-
տեն սա կէտը թէ այդ վճռադրոյ անգոր-
ծաբերի մնալը գէշ ապաւորութիւն առաջ
պիտի բերէ Եւրոպայի մէջ և կրնայ առիթ
տալ նորանոր ծայրայեղութիւններու որոնցմէ
կը վախցուի արգէն » :

ԹՎ.ԹԱՅՈՒԹԻՒՆՔ «ՓԱՐՈՍ»Ի

Բ. . . Գահիրէ. — Զեր պատասխանը «Դեպ ի
Պոլիս» յօդուածին , ուստացան : Չորեքաբքի
բուով պիտի հրատարակեն :

Հ. Նիսիսիա (Կիպրոս). — Զեր բաժանորդագիրը
«մանս-բօս»ով կրնա մեզ որկել :

Գ. Մ. Պեննա. — Նոյնպէս եւ դուք :

ՀԱՅԿ. Գահիրէ. — Երբեք ձեր մտքէն մի անցնէ
քե մեր բերքը կրնայ մենք աղալի օւկան ըլլալ : Մի
շանա մեզ բան սորվեցնել . մենք երկիրը ձեռն շաւ
աւելի կը նանչնանք :

Գ. Թ. Գահիրէ. — Ինչո՞ւ չէ . բաւական է որ
ուզէք :

Հ. Ս. Աղեքսանդրիա. — Ուզուած տեղեկութիւնը
մեր ձեռնամասութենէ վեր է : Պան Ծօրանի դիմե-
ցէք :

Տիպիւ Ս. Գահիրէ. — Երանք քե ամեն կին ձեզ
պէս մտածեք .

Մ. Գ. եւ Ս. Խ. Աղեքսանդրիա — Յաջորդ բուով
պատասխանելի կառնէք :

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ , մասնագէտ կանանց , ստամոքսի , մոր-
քի եւ ջղային հիւանդութեանց : Կրնողուի իրեն
դիմող հիւանդները Բանիօն Ֆիլիք , Հօքի Բօնիփան-
քալի դէմ , ամեն օր առաւօտեան ժամը 10էն 11 եւ
կեսօրէն վերջ 2էն 4 : Բոլոր վկայեալ ալիսքն ձեռն կը
դարմանուին :

Ա. Զ. Դ. — Եւրոպայի բնտանիքի մը հա-
մար վարպետ հայ խոհարարուհի մը կ'ուղարկէ :
Դիմել ՓԱՐՈՍԻ խմբագրատունը :

Le Gérant: HENRY SAKAKINI

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՀԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ՄԵԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԵՔԻ
ՄԵՄԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Ընդհանուր Մրերանոց «Շարա Ազգայն»
Խառն Դասարաններու դիմ:

Ընթացիկ Գին ՍԻԿԱՌԵՔՆԵՐՈՒ

Սիկարէթ Ռուսեալ	1000 հաար	2 1/2 Անգ. ոսկի
" Խըտիլեալ	" "	2 " "
" Պալատական	" "	1 1/2 " "
" Պօհնա	" "	1 1/4 " "
" Նաթիլիլ	" "	1 " "
" Փօռ	" "	20 ֆրանք

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ,
ԵՒ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԵՆ

Միակ սնունդ և ուտելիք հիւանդներու համար,
կազմուիչ արքի, շնչառական գործարաններու, և ար-
եան եւ ջրային հիւանդութիւններու:

Կը յանձնարարուի հեծելանքի գործածողներուն:
Սեանքի դեղ ոյթի պէտք ունեցողներուն համար:

ԿԸ ԴՏԵՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Մրերանոց. — Ա. ՄԱՆՏՈՅԻԱՒ ԱՆԿՅՈ—
ԵԳԻՊՏԱԿԱՆ ՂԵՂԱՐԱՆՆԵՐ ԷԳՅԵՖԻԵ, ԴԱԽԻՐԷ:

ՀԱՄՄԱՄ

ԵՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ

ՀԱԼԻՄ ՓԱՇԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ, ՍԲԼԱՆՏԻՏ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՂՆԻՔ, ՋՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ,
ԵԼՆԵՍԲԱՐԱՌՈՒԹԻՒՆ

ԲԱՂՆԻՔԸ ԲԱՑ Է

Էրկ մարդոյ համար առաւօտեան ժամը 7էն 10
և իրիկունը, կէս օրէն սկսեալ մինչեւ 8:
Կանանց համար առաւօտեան ժամը 10էն մինչեւ
կէս օր:

Ուրբաթ և կիրակի օրերը միմիայն Էրկ մարդոց համար
կիրակի և տօն օրերը ՀԱՄՄԱՄԸ կէս օրէն վերջ
գոյ է:

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Հայ եկեղեցւոյ դէմ բացած խանութին
մէջ ամենէն զեղեարհունները գոհացնելու
եղանակաւ կ'արդուկէ չապիկներ և այլն սո-
վորական գիներով:

Ուզողներու համար լուացարարութեան
հիւշ մ'ալ աւելցուած է, ուր՝ յաճախող-
ներուն ճերմակեղէնները զատ զատ լուալու
զնահատելի գրութիւնը հաստատած է:

Ի դիւրութիւն յաճախողաց ճերմակե-
ղէնները՝ ինք անձամբ պիտի առնէ տուններէն
և պիտի վերադարձնէ:

Տ Պ Ա Ր Ա Ն
ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԼԵՋՈՒԷ ԶՐԶԱԲԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԴ, ՀՐԱԽԻՐԱԳԻՐ, ԱՅՑԱՔԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՐՈՒԽ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնա-
մօք և փութով կը կատարուին:

Վայրկենական սպազրութիւն այցեֆարսերու եւ տուներու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերէ առաւօտեան ժամը 7էն մինչեւ երեկոյեան 7:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԵՐԹԵՒԵՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4,5	օմ նիստ. 1,2,3,4,5	կէս ուղ. 1,2,3,4,5	օմ նիստ. 1,2,3,4,5	էքսորէս 1, 2 կգ.	օմ նիստ. 1,2,3,4,5	էքսորէս 1, 2 կգ.	օմ նիստ. 1 2 3 կարգ	էքսորէս 1 2 3 կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանիս	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
Թանիս	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	» 6 25	9 15	10 45	2 30	էքսորէս 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԷ ԳԱՀԻՐԷ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	օմ նիստ. 1,2,3,4,5	կէս ուղ. 1,2,3,4,5	օմ նիստ. 1,2,3,4,5	էքսորէս 1 2 կգ.	Խառն 1,2,3,4,5	օմ նիստ. 1,2,3,4,5	էքսորէս 1 2 կգ.	օմ նիստ. 1 2 3 կարգ	էքսորէս 1 2 3 կարգ
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանիս	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
Թանիս	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ՀԱՄՄԱՑ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՈՅ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՈՅ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէշ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	» 12 28	7 48	» կայարան	» —	3 30
Պէնհա	մեկ. 12 33	7 53	Խամադիա	» 1 20	7 5
Ջակադիկ	» 1 34	8 54	Ջակադիկ	» 3 7	8 53
Խամադիա	մեկ. 1 44	9 4	» 3 17	9 3	
Սիւէշ կայարան	» —	5 —	Պէնհա	» 4 13	9 47
Տօք (քարափ)	» 6 55	—	» 4 17	9 4	
			Գահիրէ	» 5 5	10 35